

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարւանը 6 ռուբլ:

ԹԻՖԼԻՍԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԸ

Օտարաբաղադրանք զինուժ ևն ուղղակի
 Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատառերը թաց է առնւածներն 10--2 մաս
(Բացի կիրակի և տօն օրերից) :

Եւ յապարհաբար թիւնն երբ ընդունվում են ա մ են չ եղ աւ ո մ

Յայտարարութիւն Նրի Չամար վճարում են:
Իւրաքանչիւր բառին 2 կօտէկ:

TECH

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՒՄ

1879

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿԱԴԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տոնն և տոններին հետևելու օրերից:

1. Երգերի զիջերը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍՆՓԱԿԿԵՆ ՀԵՌԻԳԻԻՆԵՐ: ՄԾԱԿԻ տարեկան զինք 10 ռուբլ է, կէս տարեկանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՐԵԱԳՐԱՏԱՆ, մէջ:

ՄԱՐԿՈՍ ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՆԱԿԱՆ ԶԵՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴԱՐԱՆԻ ԿԱՐԴԻՆԱԼՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատր:

Օտար քաղաքներից պետք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФ-ДПИСЪ Редакция «Ишакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳԻԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքագլխին ընտրութիւնը, — Ն եր ք ի ն տ ե
ս ու թ իւ ն: Ն ի ն ա Ա ն դ ի ի ն ժ ժ ժ ա ղ ա ն մ ա ն գ ր-
ծ ր: Ն ա մ ա լ Ղ ու ժ ա յ յ ի: Ն ա մ ա լ Ն ժ ա գ ր ի ն, Ն եր-
ք ի ն լ ը բ եր, — Ա թ ա ղ ի ն տ ե ս ու թ իւ ն: Ա ն-
դ ի ա: Ա ղ ա ն ի ա: Մ ի ն ի խ ի ա: Պ եր ու ն: — (Մ շ ա լ ի ն)
հ ե ու ա գ ի ի ն: — Բ ա յ ա ա թ ա թ ու թ իւ ն եր:

ՔԱՂԱՔԱԳԻԼԻԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՆԱՅԻ ՀԱՅՆԱՈՐ-
ՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՐ ՎԵՐՋԱԳԵԼ Է:
ԸՆԺՄ ՄԹՈՒՄ Է ՆՈՐ ԸՆՏՐՎԱԾ
ՀԱՅՆԱՈՐՆԵՐԻՆ ԸՆՏՐԵԼ ՔԱՂԱՔԱ-
ԳԼԽԻՆ:

Ամենք զիտեն որ այժմեան քաղաքագլուխ Պ. Կիպլիանցի մեռ կանգիդատ է եղել: Մենք այն ժամանակ նրա վրա նայում էինք որպէս միակ մարդ, որ կարող էր պահպանել ինքնավարութիւնը, որին վտանգ էր սպառնում, անընդունակ ձեռքերի մէջ գտնվելով, զեռ նոր ծնված, կատարելապէս ոչնչանալու:

Անկասկած Դ. Կիպիանի փորձված, ինեւցի մարդ է, բացի սուրանից մի մարդ, որի վարչական ընդարձակ ընդունակութիւնները գրաւական էին լինում, որ քաղաքի կառավարչական խառն գործերը նորից իրանց կանոնաւոր ընթացք կը ստանային: Մենք այն կարծիքի ենք, որ մենք չենք սխալլել մեր ընտրութեան մէջ գուցէ թէ Կիպիանի չը լինէր, մենք կը կորցնէինք մեր քաղաքային ինքնավարութիւնը: Այնպէս որ Դ. Կիպիանի ունի

Վարչական բարձր շրջաններում
բիշ չը նպաստեց մեր քաղաքա-
յին խոքնավարութեան պահպան-
վելուն:

Իայց այնու ամենայնիւ Կի-
պիանի Տին սերունդի մարդ
է, նա ունի իր բոլոր արժանա-
ւորութիւնների հետ և Տին սե-
րունդին յատուկ բոլոր պակասու-
թիւնները: Նա աւելի ձևապաշտ
է, քան թէ գործնական մարդ,
նա աւելի բիւրօկրատ է, քան թէ
քաղաքային տնտես:

Կրկնում ենք, մեր կարծիքով,
անցած չորս տարիների համար,
երբ մեր ինքնավարութիւնը պետք
է նոր ձևակերպվէր,—մի խիստ,
երկաթեայ բայց սառն ձեռք
հարկատու էր մեր ինքնավարու-
թիւնը կանոնադրելու, մեր Դո-
ման և Ուլարովան առաջնորդե-
լու համար:

Ոչ մի երիտասարդ մարդ չէր
կարող անել այն, ինչ որ արա-
րի. Կիպիանի:

Իսկայ ուրիշ կողմից այդ չորս
տարւոյ ընթացքում մեր քաղա-
քային տնտեսութեան մի քանի
բուն գործնական խնդիրներ գուցե
և անուշադիր թողվեցան: Ոչ մի
տեխնիկական խնդիր մեր քաղա-
քում չառաջացաւ, չը ժշկվեցաւ,
վերահսկողութիւն չը գործվեցաւ
ժողովրդի բազմութեան համար
ամենամանհրաժեշտ կենսական պա-
հանջների կանօնաւորելու վրա:
Իսկապէս և նրա վրա գտնվող ա-
ռաջն հարկաւորութեան միջոցը:

Ների անընդհատ թանգանալը բա-
ւական հոգեքերի առարկայ չեղան
անցած չորս տարվայ քաղաքային
վարչութեան կողմից...

Կրկնում ենք, Կիպիանի այն-
քան զօրծնական մարդ չէր, որ-
քան փարչակոն մարդ:

Ենցած չորս տարիները մեր
ինքնավարութեան գոյութեան հա-
մար գուցէ ամենադժուար տարի-
ներն էին: Թող չը մոռանան ինչ
էր Դուման իշխ. Թումանովի
կամ պ. Լյեմիրզովի ժամանակ
մի խառն, մի չը գիտցալինած
ամբօխ, որ կամ չէր հաւաքվում,
կամ եթէ հաւաքվում էր, վերա-
բերվում էր հարցերին տնային,
նահապետական, անհոգ կերպով:
Մարդիկ չը գիտէին խօսել, չը
գիտէին փայտուչ կերպով վիճա-
րանել: Չայնաւորներին հարկա-
ւոր էր ն ա խ ա գ ա հ, հարկաւոր
էր զեռ կարգ սովորեցնել, նրանց
հարկաւոր էր որ և է գիտցալի-
նայի տակ ենթարկել: Նրանց
հարկաւոր էր մի հ ե ղ ե ն ա կ ու
թ իւ ն:

Ահաք հակված ենք մտածելու,
որ այժմ մեր ինքնավարութիւնը
հաստատ արմատներ է գցել ար-
դէն, որ մեր Ղումային հարկա-
ւոր է այժմ մի աւելի երիտա-
սարգ ոյժ, մի եռանդոտ և մա-
նաւանդ գործնական մարդ, մի
քաղաքագլուխ, որի ամբողջ գոր-
ծունեութիւնը կենտրոնացած չը-
լինէր միմիայն ձևի, թղթերի
մէջ, Ղումայի նիստերում խիստ
կարգապահութիւն, քաղաքային
վարչութեան գործերի մէջ հար-
կաւոր ձևապաշտութիւն մտցնելու
մէջ....

Մի խօսքով այժմ էլ մեզ
այնքան հարկաւոր չէ մի բիւրո-
կրատ, այլ մի գործնական, կեանքի
ամեն հանգամանքների, ժողովրդի
ամեն կենսական պահանջների,
նրա առօրեայ ամեն կարիքների
մէջ մտնող մի տնտես:

Զը մոռանանք և այն, որ եկող
չորս տարիներում պետք է վճար
վեն մեր Վուսայի մեջ մի քանի
նշանաւոր և բուն տնտեսական
կամ տեխնիկական բնաւորութիւն
ունեցող խնդիրներ, ինչպէս ջը-
րանցքը, գազի լուսաւորութիւնը

և այլն: Ուրեմն վատ չէր լինի որ ինքն քաղաքագլուխը տեխնիկական զարգացում ունենար, ինքն հմուտ լիներ այդ մասի մէջ, որպէսզի կարողանար վերահսկել այդ հարցերի կանոնաւոր վճռելու վերաբերութեամբ:

Այդ պատճառով մենք առաջարկում ենք Դումային մեր կանգի դիպատին, որ, մեր կարծիքով այդ բոլոր յատկութիւններն ունի. դա Յովհաննէս Ստեփանեան խառիսեանն է:

Եթէ մենք սխալվում ենք, թող մեզ ապացուցանեն, թող առաջարկեն աւելի ծանր և յարմար մարդ: Հասարակական գործերում պէտք է անկողմնապահ լինել, ընդհանուր օգուտների մէջ երբեք չը պէտք է կամօտոր լինել: Մենք պատրաստ ենք համոզվելու, եթէ մեզ համոզեն:

9. U.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ն.Ի.Ա. ԱՆԴՐԻԵՎՍԿՈՒ ՍՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ

Պաշտպանի ծառի շարունակությունը եթե չձմարիտ ինչան Անդրիեփսի սպանված է ելլել, եթե այդ ապացուցված էլ լիներ որ սպանողները այս մեղադրվածներն են եղել այնու առնախի մեզ պալատ է նրանց յանջանքի շարժառիթը, Զե կտրել ընդունել որ մարդիկ սպանեին առանց նպատակի, առանց շարժառիթների, միայն սպանելու համար: Այլպես կը վարվի միայն խելագարը: Պատահում է որ բոլոր ապացույցներ կան թե այս ինչ մարդ այն ինչ մարդուն սպանել է, բայց շարժառիթը գտնված չէ, մեղադրվածը գտնադրված է, յանկարծ սպանվածը կրկին յարություն է առնում:

Ներկայ մեղադրվածները վերաբերում թիմում մեղադրական ակտի մէջ բերված չեն ոչինչ շարժառիթներ, մանաւանդ ծառաների մասին։ Նրանց մասին, ինչպէս ամեն տեղ, քիչ են հոգում, հաւատացած են որ ծառաները, մանաւանդ տեղացիները, արխազները, կը կատարեն իրանց տուած հրամանը առանց հակառակելու, և առանց մտածելու վերթան ոչխարների պէս, ուր որ նրանց տանում են։ Ասում են արխազները մի արասու համար զատորստ են մտրդ սպանել։ Դա այս երկրլ մէջ բնակվող մինչև անգամ կրթված մարդիկների օժգորական հայեացք է։ Դաժարանը պէտք է՝ ամէնքի վրա հաւասար աչքով նայի, մինչև անգամ կարմրամորթ վայրենիների վրա։ մենք ամէնքս Աստուծու արարածներ ենք։ Վերջապէս պէտք է աչքի առջև ունենալ որ Անգրիւնվկիկների տան բոլոր ծառայողները, այնքան կախված չէին Զատուայից, այնքան կախված չէին նրան, որ հըս կերպով կատարէին նրա բոլոր հրամանները։

Գարեխօսի մէջ շարքով կար որ վարձվել էր 2խօտուայի մօտ: Ասում են որ Նիկոլայ 2խօտուա եկեղեցիքը իր մեծ եղբորը, բայց ընդհակառակն կարելի է ընդունել որ Դաւիթ իրօրը չէր մասնակցել տայ իր եղբորը սպանութեան մէջ: Նահատարութեան համար չէր կատարվել սպանութիւնը, որովհետեւ Նիւնայի կորչելուց յետոյ ոչ փողի, ոչ էլ նրա թանկագին իրերէններէ գողութիւն պատահած է: Օրիորդի մահը ոչ զինն օգուտ չէր կարող բերել, բայց իր եղբոր Կոնստանտինից, որ այն ժամանակ Օղէսայումն էր: Վրէժ-խնդրութեան կամ թշնամական զգացմունքը 2խօտուա նոյնպէս չէր կարող ունենալ օրիորդի դէմ: Դեռ ևս 1870 թիւն 2խօտուա ծանօթ էր Անդրեիսիկների հետ Օղէսայում, դեռ հանգուցեալ ընդհանուր թանկութեան ժամանակ: Նա ընդունված էր այդ տան մէջ, որպէս մի աղքատ, մի եղբայր: Նրա յարաբերութիւնները դէպի Նիւնայ, որ սիրում էր պարսպել բնական գիտութիւններով, շատ լաւ էին: Բժիշկը վախճանվեցաւ 1872 թիւն, իսկ մինչև 1876 թիւն նրա ժառանգութիւնը անբաժան մնաց երկու քոյրերի մէջ, և շատ քիչ արդիւնք էր տալիս: Վերջապէս նշանակվեցաւ կառուածների կառավարիչ Դաւիթ 2խօտուա: Նա երեւելի կառավարիչ չէր, բայց ամենքը հաստատում են թէ ազնիւ մարդ էր: Նա տան մարդ էր և 200 հազար ռուբլ արժողութեամբ կառուածների կառավարութեան համար ստանում էր 600 ռուբլ, յետոյ նրա առձեռն աւելացրին մինչև 1200 ռուբլ:

Այստեղ պաշտպանը պատմում է մանրամասնաբար ինչպէս կատարվեցաւ երկու քոյրերի մէջ կառուածների բաժանվելը, ինչպէս 2խօտուա բոլորովն կրաւորական դեր էր խաղում այդ գործի մէջ, ինչպէս ինքն հրաժարվեց կառավարիչ պաշտօնից և երբեք չէր էլ մտածում Նիւնայի կառուածների կառավարիչ լինել: Նիւնայի մայրը այդ վկայում է: Նիւնայ 2խօտուայի տեղ նշանակեց Սուլխանովին կառավարիչ, բայց ժամանակակից պէս, և զրեց մի նամակ Օղէսա իրանց տան կառավարչին որ մի ուրիշ կառավարիչ գտնել:

Երբ որ Նիւնայ գնաց 2խօտուայի և Սուլխանովին հետ իր նոր կառուածները նայելու, այն է Դեբի անտառները, նա յայտնեց գիւղացիներին, որ նրանց կը արվին հողեր, որոնցից նրանք զբղծված էին իր հօր կենդանութեան ժամանակ: Այդտեղ Սուլխանովին նկատեց որ 2խօտուա գունաթափված էր և բարկացած նայում էր իր վրա: 2խօտուա կարող էր գունաթափվել և գրգռված լինել, որովհետեւ դա մի հանդիսաւոր քօպէ էր, երբ աղջիկը խօսում էր գիւղացիների հետ: Իր ասածները Սուլխանովին գլխաւորապէս հիմնում է ոչ թէ իր սեփական հետաքրքրութեան վրա, այլ գիւղացիներից մինի, Բադրատ-շվիլի գիւղացու ասածի վրա: Բայց վերջը յայտնվեցաւ որ այդ գիւղացին ընդունում էր Սուլխանովին Կոնստանտին Անդրեիսիկու տեղ: Մեղադրական ակտը փորձեց գործի մէջ խառնել և Շերվաշեձէին, և նախնական հետախուզութիւններ վաղուց է որ կատարվում էին Քուլայիսում, բայց պրօկուրորը ինքն խոստովանում է թէ Շերվաշեձէին մեղադրելու համար բաւական ապացոյցներ չը կան: Ինչ հարկաւոր են ապացոյցներ, երբ մի կողմից օրէնքի հիման վրա Նիւնայի սպանութեանց Շերվաշեձէն օրէնք չէր ունենայ, որովհետեւ կառուածները օրէնքով կանցնէին Նիւնայի եղբորը, իսկ միւս կողմից յայտնի է որ Նիւնայի և Շերվաշեձէի յարաբերութիւնները ամենաբարեկամական էին:

(Կը չարունակվի)

ՆԱՄԱԿ ՂՈՒԻՐԱՅԻՑ

11 դեկտեմբերի

Առաջին անգամ երբ մենք այցելեցինք Ղուբայի հոգեւոր-ազգային դպրոցը, նրա մէջ 40 աշակերտներ կային. ուսումնարանը չունէր դասական հարկաւոր պիտոյքներ, փոխանակ դասատուների բաժանված էին նստարանները երեք շարքով, բայց երբ ուսուցիչը պարսպում էր առաջին բաժանման հետ, միւս բաժանումները անգործ էին մնացած և այդ էր պատճառը որ նստարանները տակ «ուսուցիչ» էին խաղում և աղաղակը այնքան էր բարձրացած որ անկարելի էր աշակերտների ընթերցանութիւնը լսել: Ուսուցիչը մէկ աշակերտի դաս հարցնելիս, միւսները բոլորովն ուշադրութիւն չէին դարձնում իրանց ընկերով կարդացածին, որովհետեւ ուսուցիչը իր թուութեամբ առիթ էր տալիս մնացածներին խաղալ և կամ դրադիւլ խաղերով: Բայց երբ ուսուցիչը դժբաղդապէս նկատում է մի այդպիսի բան նրա առաջն առնելու համար գործ է դնում սպանութիւններ ի մականուններով:

Թուրքաբանութեան դասին ուսուցիչը առաջարկեց թուրքաբանական քանի մի խնդիրներ և իր կարծիքով քանի մի սխալներ ուղղելուց յետոյ, մենք ձեռնարկեցինք հարցախոսութեանը, որ ինքը ուսուցիչը չը հասկացաւ թէ քիչ կերպ լուծվեցան իր առաջարկած խնդիրները:

Թէ որպիսի առաջարկութեան քայլ կարող է գործել այսպիսի մի ուսումնարան իր սղէտ ուսուցչով, այդ թողնում ենք ընթերցողի դատողութեանը:

Երրորդ անգամ այցելութեան ժամանակ, առաջվայ քառասուն աշակերտների փոխանակ միայն տասն էին մնացած, միւս բոլոր աշակերտները արհամարհելով նոր ուսուցչին, իրանց արժանաւորութեանց ստոր էին համարել ուսանել այնպիսի մէկի մօտ որը իրանց հարցին զեւթուարանում էր պատասխանել, պատճառ բերելով նոր գոյացած գլխացու:

Բայց քիչ կատե՛ր. երրորդ այցելութեան արժանի չեղալ որովհետեւ ուսումնարանը մի նոր ուսուցչի չնորոգվ փակված էր և բնակարանը արդէն վարձված:

Մենք մտադրել էինք աւելորդ խօսել և դատողութիւններ տալ այս ուսումնարանի անցեալի և ներկայի վերաբերութեամբ, բայց անմիջապէս հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել Ղուբայի ազգային-դպրոցի հոգաբարձութեանը, որի հովանաւորութեան տակ է ուսումնարանը:

Արդեօք քիչ պատճառից զրոյված նրանք հարկաւոր են համարել փակել դպրոցը, որ այնքան հայ երեւելիքը առանց պարագմունքի թափառում են քաղաքի փողոցներում: Եթէ հշմարիտ ուսուցչի պակասութեանց է կախված, մենք խորհուրդ կը տայինք յարգող հոգաբարձութեանը հրաւիրել ինչ տեղից որ հարկն է, օրինակ Թիֆլիսից գտնել մի վարձպէս, որ կարողանայ կառավարել ուսումնարանը, և չը թողնել որ հայ մանկիքը առանց ուսման անգործ թափառանք փողոցներում: Գուցար իմ որ յարգող հոգաբարձութեանը կը հոգան իրանց Ղուբայի միակ ազգային ուսումնարանի բարօրութեան և առաջադիմութեան համար:

Ն. Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երեւան 10 դեկտեմբերի

Մշակի № 208 մէջ կարդացի մի նամակ Երեւանից, դարձեալ իմ վերաբերութեամբ, այս անգամ «կարապետ Ջալալեանց» ստորագրութեամբ: Այդ նամակում եւ մեղադրվում եւ գալիսնեան օրիորդաց դպրոցի դահլիճում ներկայացում տվող թատրոնականներին վարձ ստանալու: Իմ նպատակը չէ այստեղ երկարաւնելով մի փաստաբանի պաշտպանողական ճառ կարդալ, այլ որովհետեւ ձեր նամակագիրը իր դատը յանձնել է ժողովրդի քննադատութեան, ուստի ժողովուրդը իր քննադատութեան միջոցում որպէս զի արդարութեան ճանապարհից չը չեղվի, յիշեցնում եմ մի քանի հանգամանքներ, որոնք իմ կարծիքով, քննադատութեան արդար լինելուն կը նպաստեն:

Յանկանալով ծայրագոյն հոգեւոր իշխանութիւնից ինչ հաւատարմած տարեկան 5-600 մասնէթով կառավարվող աղքատիկ դպրոցը մուրաւուր վիճակից փրկել, ապագայի նրա կենդանութեան արդար կազմել և մի նոր գորաւոր գործի

տալ նրան, եւ ուսումնարանի հոգաբարձութեանը խորհրդով վճեցի կառուցանել թատրոնական բեմը, որի շինելու ժամանակ եւ միայն էի, որ յանձն էի առել մի կողմից ամառական տնտեսներ չորի տակ կանգնել մշակների մօտ, միւս կողմից սրան նրան օգնութիւն խնդրելու ձեռք պարզել, իւրաքանչիւր յուսալի անհատին առանձին, առանձին նամակներ գրել որպէս զի ի կատար ածեմ իմ ձեռք առած թատրոնական բեմը, որը պիտի լինէր և է դպրոցի միակ հաստատուն աղբիւրը: Այս և սրանից աւելի նեղութիւններ կընկուց յետոյ, եւ միայն միջթափում էի երկու մտքով, մին որ կունենանք քաղաքացիներին համար բարոյականութեան տաճար, երկրորդ, որ սրա տված արդիւնքով հնչալ կը լինէր դպրոցի շրջանը ընդարձակել մի փոքր: Ահա այդ յուսով էր որ բացվեց այս տարի մի նոր դաստան: Այնպէս որ ընդհանուր ծախքը 2500-ից անցնում է, որից գտնէ մի հազարը պիտի միայն թատրոնը տայ, հակառակ դէպքում դպրոցը պարտք կը վատտակէ:

Յօդաւոր դպրոցի տարվայ ընթացքում իր ուսուցչիները հազու կարողանան 5-6 ներկայացումներ տալ, որ իւրաքանչիւր անգամ հազու ժողովում է 100-110 ռուբլ (տեղերի գները բաւական արժան են նշանակված ժողովրդի բոլոր դասին մասշեկի անելու համար): Ուրեմն մնացած պատարագը պէտք է լցվի մասնաւոր ներկայացումներին: Ուրեմն վարձելով, որը կը ստացվի ամեն ներկայացում տվողներից, անխորաբար ով էլ որ լինի նա: Գպրոցի դահլիճի վարձը, երկու տեսակ են. առաջինը 50 ռ. երբ ներկայացումը բարենպաստակ և ազգօգուտ հիմնարկութեանց համար է, երկրորդը 70 ռ. երբ մասնաւոր անձանց օգտին է: Եւ այս դպրոցի ու թատրոնական վարչութեանց արած տնօրէնութիւնը, իբրեւ հաստատութիւն, արդէն յայտնված է Ղորին վեհապալատութեան, որին միայն ենք ճանաչում: *)

Իսկ ինչ կը վերաբերի նրան, թէ երկու գլխաւորներն էլ ջուրեր են, եւ ոչինչ չունենալ ևս լու, դեռ կաւեղացնում էլ որ բոլոր հայ դպրոցները կարայր և ջուր են. եթէ այդ յիշված է արդիւնքները բաժանելու համար, Գայիանեան դպրոցը միայն այն ժամանակ օգնութեան ձեռք կը մեկնէ ուրիշներին, երբ իր պէտքերը, եթէ ոչ բոլորը, գտնէ անհրաժեշտները: Երբ կը լինեն, երբ ինքը օգնութեան կարօտ չի լինի: Կիսաքաղցածին դառն չարարածներով ձեռք բերած մի կտոր հացից զրկելը և միւսին տալը, միթէ մի նշանաւոր կամ աննշան օգնութիւն անել կը նշանակէ: Բայց եթէ ձեր նամակագիրը այնքան անկեղծութեամբ ու անաւարտութեամբ է նայում այս երկուսին էլ, որ իմ դպրոցական և թատրոնական վարչութեանց (?) տնօրէնութեանը հաւատարիմ մնալը այդքան խոր թափանցել է ու տխուր տպաւորութիւն է թողել, պարտին վրա, թող յիշէ, եթէ մոռացել է, որ եւ ստիպված էի և Ս. Գայիանեան օրիորդաց դպրոցի համար, մինչև անգամ նրա ծանր կրեթիզական միջոցում, առանձին, առանձին ուսուցչիներ վարձել, այն ինչ Սահակեանեան ուսումնարանը, բացի այն, որ կարող է աղքատել, իրան պաշտպան, հարուստ պարոններին օգնութեամբ կառավարվել, ունի և մի այլ դրանից ոչ պակաս աղբիւր, այդ իր մեծ եղբայր—թեմական գրգռանցն է, որի հետ միասին եւ կառավարվում: Մեր կարծիքով փոքր քրօջ դրութիւնը, իր հասակին համեմատ, աւելի է ապահովված: Այս ամենը ձեր պատուելի նամակագրին ևս յայտնի լինելով, դարձեալ թող է տալիս առել ինչ համար, որ եւ կիրք գործադրեցի, այն էլ մի «ինչ յայտնի անհատի դէմ: Թող լաւ հասկանան կարապետները, որ իրանց մինչև այդ աստիճան փարիսական ազգու գրիչները, այդ կեղծ հրապարակախօսների ճարտարարուեստ նկարագրութիւնները ինչչին վախեցնի քանի որ անարդար են, միայն դորանով գուցէ միամիտ, գործից անտեղեակ, իրանց չը ճանաչող անձանց գայթակղեն, եթէ ոչ երևանցիք եւ շատ լաւ են ճանաչում իրանց զիմակի տակ խօսողներին, և անդիմակ գործողներին: Չը լինի պ. նամակագրին ցաւ է թվում, որ Գայիանեան դպրոցը կարողացաւ ամեն արգելքներ յաղթելով, ամեն դէպ ինքն ծուռ աչքով նայողներին ամօթահար

*) Երկրի հայր Մեղեանը սխալվում է վեհ. կաթողիկոսի մասին խօսելով: Չենք կարծում, որ Ղորին վեհապալատութիւնը թատրոնական զեկուցումներ ընդունէ, կամ ներկայացումների համար կարգադրութիւններ անէ: Ամենայն Հայոց կաթողիկոսը աւելի մեծ գործերով զբաղված կը լինի:

Իմք.

Թողնելով իր տոկոսութեամբ, իր համբերութեամբ նեղ կեղեից դուրս գալ ու այսօր փոքր ի շատէ ազատ օղ չնչել, բայց այդ անկարելի է երևում և ինչ, որովհետեւ այնքան լաւ եմ ճանաչում լեզուն և գրիչը....

Վերջապէս ձեր յարգելի նամակագրի սիրտ փրաւորողը, քաղաքացիների քննադատութեան գանգառվելու պատճառը, ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ դպրոցի ու թատրոնական ժողովի (?) արած տնօրէնութիւններին իմ կողմից հաւատարիմ մնալը—դպրոցի շահերը—պաշտպանելը, թող լաւ գիտենան ձեր նամակագիրը և իր համախոսները որ քանի շունչս կայ, պիտի միշտ հաւատարիմ մնամ ինչ հաւատարմած գործերին, մասնաւոր վճոված տնօրէնութիւններին, եթէ դորանով մահու էլ արժանանամ և թող այս ևս մտքերից չը հանեն, որ սրանով ինչ վրա կըրքեր շարժող անհատներին, որոնք դպրոցական գործերի պատճառով անձնականութեան ու անձնական շահերի միջոցում են և գուցէ դեռ մնան, իմ արժանաւորութիւնից ստոր եմ համարում յանդիմանել ու նրանց դէմ խօսելով, քանի որ այդպիսիք մինչև այժմ անքան տգէտ են, որ ազգայինը անձնականից չեն կարողանում որոշել: Եւ բոլոր այսպիսի դէպքերը ինչ պատիւ եմ համարում, քան անարգանք և իմ գործակաւորութիւններին մէջ օյնիչ անարդար ու խղճի դէմ բան չեմ գտնում: Աւելի լաւ է մինը լինի միշտ, քան երկուսը—աղքատ:

Յովսէփ աւագ քահանայ Մեղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐ

Մեղ գրել են մի քանի նամակներ Ա.ԽԱԼԻԱԼԻԱՔԻՑ նայն անցքի վրա, որ նկարագրված էր «Դափ. Բեշտ» լրագրում: Երկու դարգուն օֆիցերներ մտնում են մի աղքատ հայի տուն, որտեղ կատարվում էր հարսանիք: Ամենքը զարմանում են, յետոյ ներկայ գտնվողներից մինը խնդրում է նրանց դուրս գալ: Օֆիցերը բռնում է նրան օձիքից և սկսում է խեղդել. հայը կարողանում է ապաստվել, գցում է օֆիցերին յատակի վրա և սկսում է ծեծել օֆիցերին: Կուրս խառնվում է միւս օֆիցերը, կռիւղ դառնում է ընդհանուր: Օֆիցերներից մինը վազում է դիւլաւորանոց և բերում է իր հետ 15 սուղաւորներ, որոնք նրա հրամանով սկսում են ծեծել տան բոլոր հիւրերին, յետոյ հրամայում է բռնել բոլոր կանանց և աղջկանց և լրացնել իրանց պահանջները: Օֆիցերներից մինը բռնում է նորահարսին: Խառնակութիւնը և ալանդակ տեսարանները աննկարագրելի էին: (Մենք հաւատացած ենք, ասում է «Դափ. Բեշտ» որ զիտուարական վարչութիւնը անպատիժ չի թողնի այդ բաշխութեւնը և կենսել ին, որոնք ոչ թէ միայն անպատում են զիտուարականից զգեստը, բայց և օտաւկոյն են անում բոլոր մարդկային իրաւունքները:)

Թիֆլիսի Գումայի երրորդ կարգի ճայնաւորներ ընտրվեցան. Ս. Շահինյան, Ն. Նիկոլաձէ, Յ. Վարդանով, Ե. Խոսրովի, Գ. Սուրենյան, Յ. Լիւմիբով, Յ. Յովհաննիսեան, Ս. Մեխի, Իշխ. Ա. Չէլօկանով, Գ. Ալիբով, Ա. Թալիբով, Յ. Տէր-Յովսէփեան, Գ. Մանիով, Պ. Բաբանասով, Իշխ. Ս. Բէհլուով, Գ. Խաթիսով, Ն. Շահինով, Ա. Կապանաձէ, Գ. Կորգանով, Ս. Զարապով, Ս. Սարգիսով, Յ. Փոնդով, Զ. Տէր-Աստուրով, Ի. Յիւսէփով: Կանգնողներ ընտրվել է Ե. Ստեփանիկ:

Թիֆլիսի գործակաւորների ընկերութեան նախագահների խորհուրդը խնդրում է ընկերութեան անդամներին կամ անդամ գրվել ցանկացողներին, ուրաւթ դեկտեմբերի 22-ին, երեկոյան 6 ժամին շնորհ բերել Թիֆլիսի քաղաքային Գումայի դահլիճը ընկերութեան համար բնակարան վարձելու հարցը ընդհանուր ժողովի մէջ վճռելու համար:

Մեղ հաղորդում են ՂՈՒԻՐԱՅԻՑ, որ այստեղ եղանակը շատ տարբէ: Մօտակայ դասերը ծաղկնեւում են ծածկվել: Շատերը դեռ վառարաններ չեն տաքացրել, չը նայելով որ ջրվախ սարերը ձիւնով պատած են: Երեքը պատում են, որ այդպիսի եղանակ վաղուց նուր չեն տեսնել:

ՂՈՒԻՐԱՅԻՑ մեղ գրում են, ՎՈՐԵԱ դեմո

վրա ձգված է մի կամուրջ որ շատ հին, աւեր-ված և քիչացած է։ Այդ կամուրջը միացնում է քաղաքի երկու կողմերը, որոնցից մէկում բնակ-վում են հայեր, ուսանելի և թուրքեր, իսկ մի-սում հրէաներ։ Կամուրջից բազմաթիւ մարդիկ են անցնում և տուր կամ գումար կտրուկ վը-վանդի են ենթարկւում։ Օրերումս այդ կամուր-ջի փոսած փայտերից մէկը կտրուկ և երկու մարդ ընկնում են, մէկի ոտն է կտրուկ, միւսի մարմինը շարժւում։ Այդպիսի տարաբաղդու-թիւններ շատ կը պատահեն, եթէ կամուրջը չը նորոգվի։

Մեր թղթակիցներից մէկը հաղորդում է Նի-խԱնիճ, որ հայր Յովսէփ Միւսեանցի թատրոն-կան խումբը օրերումս դարձեալ մի ներկայացում տուեց, որ շատ վատ անցաւ։ Նամակագի-րը կարծում է, որ եթէ այդ խումբը կը շարու-նակէ ներկայացումներ տալ, ժողովուրդը բոլո-րովին կը զզվի թատրոնից։ Մեր կարծիքով ար-ժանապատիւ հայր Միւսեանցը շատ լաւ կանէր, եթէ թողնէր թատրոնական գործունէութիւնը, Այդ նրա խելքի բանը չէ։ Արժանապատիւ հայ-րը Նիւսեանի համար թատրոն չիւնց, դա մի մեծ գործ է, իսկ եթէ այժմ թոյլ կը տալ ուրիշնե-րին գործելու աւելի էլ մեծ գործ արած կը լի-նի։ Յայտ ունենք, որ պատուելի հայրը կը հե տեի մեր խորհուրդին։

ՂԱՐՍԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Կեկտեմ-բերի 5-ին երեկոյեան 11 ժամին Չարսու փո-ղոցում դարձեալ հրդեհ ընկաւ։ Հրդեհի ահագին բոցից լուսաւորված էր ամբողջ քաղաքը։ Այն-քան բազմութիւն էր հաւաքվել, որ մարդ տե-ղից չէր կարող չարժվել։ Երկու հասնաւ ալէ-քան անդառաջիկ և թիֆլիսցի երիտասարդների ջան-քերով, որոնք հարկաւոր դէպքում կրակի մէջ էին մտնում։ Ներկայ էին զինուորական նահանգա-պետը և բոլոր պոլիցիականները։ Շատերը օդու-քաղելով ընդհանուր խառնակութիւններից մո-տակայ խանութներից ապրանք էին գողանում, քիցը աստիճանաւորներից մի քանիսը ծաղրում էին ժողովուրդին ստեղծել, որ մինչև այժմ փո-ղոցները տգեղ, անձն էին, այսուհետև հրդեհի նորից մի անգից կը կանոնաւորվեն։ Այդպիսի խօսքերը յուսահատեցնում են և կասկածանքի մէջ են գցում ժողովուրդին։ Այդպիսի խօսակ-ցութիւնները լսելուց յետոյ բնակիչները կար-ծում են, որ դիտմամբ հրդեհ են գցում փողոց-ները կանոնաւորելու համար։

Մեզ հաղորդում են ՂԱՐՍԻՑ, որ օրերումս էրզրումի հայ կաթօլիկների առաջնորդ Ստեփան-նոս եպիսկոպոսը օծել է Ղարսի սուրբ Լուսա-ւորի կաթօլիկների եկեղեցին։ Հանդիսի ժամա-նակ մեծ բազմութիւն է ներկայ գտնվել։ Ստե-փաննոս սրբազանը ժողովրդին միտքիւն է քա-րոզել։ Նա ասել է, որ դաւանութիւնը երկպա-ւակութեան պատճառ չը պէտք է լինի, որ հայ կաթօլիկները, հայ լուսաւորչականները և հայ լիւթերականները միայն դաւանութեամբ են բա-ժանված, բայց մի և նոյն ազգութեան են պատ-կանում, որ այդ դաւանութիւնները ունեցող բոլոր հայերը պէտք է միացած ոյժերով աշխա-տեն իրանց ազգային ընդհանուր շահերի հա-մար։ Սրբազանի քարոզը շատ համակրական էր։ Յանկալի կը լինէր, որ մի արեղաններն էլ ի-րանց քարոզչներով մեկնէին հասարակութեանը, որ դաւանութիւնը և ազգութիւնը զանազան գաղափարներ են, որ մի և նոյն ընտանիքի ան-դամները կարող են զանազան դաւանութիւններ ունենալ, բայց մի և նոյն ազգութեան պատ-կանելը։

ՔԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մեր երկես ու-սում արաբների տեսուչ պ. Լ. Թիւսիկեանց ուսումնարանները շատ անկարգ դրութեան մէջ գտաւ։ Այդ անկարգութիւնների մասին շատ անգամ գրվել է։ Լ. Թիւսիկեանց տղայաց ու-սումնարանը բաժանեց երեք նախաընթաց-ների և մի առաջին դասատան, որտեղ միայն վեց աշակերտներ կան։ Օրիորդաց ուսումնարանը բաժանված է երկու նախաընթացների։ Նա դասատուների համար իւրաքանչիւր առարկայից նախագիծ պատրաստեց, որ ընդունվել է ընկ. խորհուրդից։ Իւրաքանչիւր շաբաթ ուսուցչական ժողովներ են լինում։»

Օրերումս Թիֆլիսի Գոգֆորուս եղբայրների ցիւրիկ բուֆետում մի շատ անախորժ անցք պա-տահեց։ Մի զինուորական բաւական խմելուց յետոյ մեղադրում էր բուֆետի տիրոջը, որ նա

ճիշդ հաշիւ չէ ներկայացնում։ Մի քանի տաք խօսքերից յետոյ զինուորականը սովորական յան-դգնութեամբ սկսեց բաժանիւր և չիւր խիկ բուֆետի տիրոջ գլխին։ Ողորմելին բոլորովին արիւնի մէջ չաղակվել էր։ Վերջին ժամա-նակները մի քանի զինուորականներ, չը յար-գելով իրանց աստիճանը և պաշտօնը, իրանց թոյլ են տալիս անկարգութիւններ անել հա-սարակական տեղերում։ Էլ չենք խօսում ան-կրօնների մասին։

ՔԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ անհրաժեշտ պիտոյ զինքը չափազանց թանգ են խնայարանների գները հետզհետեւ բարձրա-նում են։ Հիւրանոցների սենեակները միշտ բաւ-ված են լինում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ

Լաճօրից հեռագրում են «Temps» լրագրին հետեւեալը։

Վերէի, գեկտեմբերի 8-ին, զենեւալ Ստեփա-րը հասաւ Քէտաւ-Տ, ուր նա ընդունեց պա-հապան զորքերի հրամանատարութիւնը։

Անգլիական զորքերը մի հետադադարութիւն արին Քօշա-Ամրան կողմերը և տեսան որ Բօգանի կիրճը բոլորովին դատարկված է ափքանական զորքերից։ Բիւրդելի գնեւալը հրաման ստացաւ, որ իր զորքերը մի մասով առաջ գնայ և գրաւէ այս կիրճը։ Բօգանի կիրճը գտնվում է Քօշա-Ամրան լեռների մէջ, որոնք կտրում են Քէտաւ-Տ և Կանդաշար քա-ղաքների ճանապարհը։ այս քաղաքների մի-մեանցից հեռաւորութիւնն է ևօթանասուն անգլիական մղոն։

Վօրէր գնեւալը պաշտօնապէս հեռագրել է, որ իր գունդը գեկտեմբերի 6-ին գնացել է Մե-Քէյլը վրա, իսկ իր 8-րորդ զորաբաժնի մի մասը և տեղական հետեւակ զորքը երեք թիւանթներով միասին նա թողել հովիտում Քօշա-Քաղաքի հանդէպ։ Գերի ափքանները խոտովանել են որ էմիրը մտադրութիւն ու-նէր Կաբուլի և Կաշիի զորքերը միասին ա-ռաջ տանել, և զիշերով անգլիացիների բա-նակի վրա յարձակվել։ Ասում են որ Շուտար-Գարդանի ափքանական զորքերը պէտք է ընդդիմադրեն անգլիացիներին, բայց գնեւալ Բօրէր չէ կարծում որ նրանք համարձակվեն ընդդիմադրել, որովհետեւ շատ ժամանակ չէ որ նրանք անգլիացիների դէմ մի պատերազմի մէջ կորցրին բոլոր իրանց թիւանթները և պաշարեղէնները։

Շրջակայ գիւղերից բերնձի և ցորենի մեծ քանակութիւն են բերում Հարրաբ քաղաքը, ուր էմիրը մեծ զորքերով մտադրել է ձմերու-հայրերում կատարեալ խաղաղութիւն է և զորքերը մեծ դիւրութեամբ անց են կենում այդ տեղից։

Այն Քէյլը հեռագրում են «Times» լրագրին որ էմիրը ուղարկել է ընտանիքը դէպի Բալք, ուր ինքն էլ մտադրել է շու-տով գնալ։ Էմիրը փորձ փորձեց Գիլգանե-րին ապստամբեցնելու։ Բայց այս նա դիտա-ւորութիւն ունէր սաստիկ ամրացնել Պէյվա-րի անցքը, բայց գեկտեմբերի երկուսի անա-կնկալ յարձակումը օշնացրեց բոլոր նրա ծրա-գիրները։

ՍՊԱՆԻՍ

«Temps» լրագրում կարդում ենք հետե-ւեալը։

Ներքին գործերի մինիստր և խորհրդի նախագահ պ. Կանոփա դէլ Կաստիլլօ պատասխանելով պ. Կաստիլարի շարաթ օր-վայ ասած ծառին, յայտնեց որ նա ոչ մի հանրապետական Ֆրանսիական լրագիր չէ-արգելել Սպանիա մտնելու։

Նա աւելացրեց որ Վալադօլիդ նահանգա-պետի վարմունքը, որ նա արգելում է այդ լրագիրների ծախելը հասարակական ծանա-պարհների վրա, աւելի մասնաւոր և միայն անձնական համոզմունք է քան թէ վարչական։ Նա գրանով երբեք չէ կամեցել որ այդպի-սի լրագիրներ չը մտնեն երկրի մէջ։ Սպանիա-կան կառավարութիւնը ամենափոքր ցանկու-թիւն էլ չունէ արգելել, որ Ֆրանսիական հանրապետութեան ներկայացուցիչը Մադրիդ մտնէ։ Ընդհակառակը սպանիական կառավա-րութիւնը այնպէս կընդունի Ֆրանսիա-կան հանրապետութեան ներկայացուցչին, ինչ գաղափարների տէր էլ որ նա լի-նի, ինչպէս որ նա ընդունեց Միա-ցեալ—Նահանգների և Մէքսիկայի ներկայա-ցուցիչներին։ Յետոյ մինիստրը աւելացրեց, որ Ֆրանսիական հանրապետութեան և ըս-պանիական միապետութեան յարաբերութիւն-ները շատ բարեկամական են։

«Ա. Կաստիլարը պատասխանեց, որ արտա-քին գործերի մինիստրը, զովեւով հանրապե-տական մամուլը զիջումները, անուղղակի կերպով հաստատել է նահանգապետ Վալա-դօլիդի օրէնքը։ Հետեւորդ աւելացրեց, որ հանրապետական թերթերի տարածվելու դժուարութիւնների մասին խօսելու ժամա-նակ, նա աւելի յարձակվում էր մինիստրու-թեան օրգանների վրա քան թէ նոյն իսկ մինիստրի վրա։ Յետոյ նա ասաց որ ինքը կա-տարեալ իրաւունք ունի արմատախիլ անե-լու հակակրօնութիւնը, որովհետեւ ժողովուրդի մէջ զանազան դատակարգութեան, որոնք նախա-պաշարված կարծիքներ ունեն Ֆրանսիական հանրապետութեան դէմ ինչպէս որ դրանք երբեմն այդպիսի կարծիքներ ունեն և իտա-լիայի միապետութեան դէմ։

«Ա. Կաստիլարը հաստատեց, որ նա, այս-պէս խօսելով, ուրիշ ոչինչ դիտաւորութիւն չէ ունեցել, բայց թէ աւելի ևս սերտ կա-պել այն բարեկամական յարաբերութիւնները, որոնք արդէն կան այդ երկու երկիրների մէջ։ Եւ որոնց պահանջում են իր մարդկային պարտականութիւնները և իր հայրենասի-րութիւնը։»

ՄԵԿՍԻԿԱ

Միացեալ—Նահանգները բացի Անգլիացից շատ բարեկամ են նոյնպէս և Մեկսիկայի հետ։ Մեկսիկայի հանրապետութեան նախա-գահ պ. Գիլգը մեկսիկական պատգա-մաւորների ժողովի բացվելու օրը մի շուտ կարդաց, որի մէջ նա, ի թիւս ուրիշ բանե-րի, անխորհրդիւ արաւ այն դժուար հան-գամանքների մասին, որոնք Միացեալ—Նա-հանգների հանրապետութեան և Մեկսիկայի մէջ են գտնվում։ Եւ այդ դժուար հանգամանք-ները, ինչպէս մենք քանիցս անգամ էլ ասել ենք, ասաց Գիլգը, Ընդիկների և սպիտակ աւարառուների ասպատակութիւններից են առաջ գալի, որոնք ման են գալի միշտ եր-կու երկիրների սահմանների վրա և կողոպ-տում են հօտերը և կալուածները։ Սահման կազմող դիմը գրեթէ 2,500 կիլոմետր երկայ-նութիւն ունի, բայց աւելի այն կողմը են ասպատակութիւններ անում, որ կողմից Մեկ-սիկան բաժանված է Տէկսից։ Մեկսիկան ու-ղարկում է իր զորքերը աւարառուներին պատժելու, որովհետեւ մինչ երբ համբերէ դա դրանց անխորհրդիւններին, Միացեալ—Նա-հանգները պատասխանում են թէ Մեկսիկան անհոգութիւն է անում, մենք ինչով ենք մե-ղաւոր։

Հարցը, ինչպէս տեսնում էք, աւելացնում են լրագիրները, շատ նուրբ է։

Այնու ամենայնիւ այս հանրապետութիւնը աշխատում է կարգ ու կանոն դնել իր ներքին գործերին, նա նուազեցնում է սահմանի

գծերի վրա ապրանք փախցնողներին, աշխա-տում է ծանապարհներ, երկաթուղիներ և հեռագրական գծեր շինել, քաղաքը ապա-հովանել հեղեղների ապրեցութեանց և վեր-ջապէս կարգի դնել իր ֆինանսները։ Այս բոլորը հրապապ ձեռնարկութիւններ են։

ՊԵՐՈՒ

«Temps» լրագրում կարդում ենք հետե-ւեալը։

«Պերուի պատգամաւորների ժողովները զբաղված են թիւքթաի հարցով։ Շուտով նրանք կը զբաղվեն նոյնպէս գուանի և բորակահանքի մշակութեան ծրագրով։ Նրանք նոյնպէս կը զբաղեն օտար պետութիւններից իրանց թղթագրամը յիս գնելու, բանկերի օրէնքնե-րի վրա քննութեամբ և Պարոյի պարտքը վճարելու հարցերով։ Նոյնպէս հարց կայ որ կամենում են ընտրողական օրէնք հիմնել և սահմանադրական մի քանի կանոններ մտցնել։ Վերջապէս դրանք աշխատում են միմեկի այն գաղթականութեան հարցը որ կամենում են բերել տալ Զինատանից և Կանարեան կղզիների իտալական և գերմանական մասնե-րից։ Պերուի աշխատող բազուկներ չունի, նա աշխատում է գաղթականների մէջ գտնել այդ։ «Այժմ այդ երկրի հաւատարմութիւնը հետզհետեւ աւելանում է, գործերն իրանց սո-վորական ընթացքն են ստանում և Անգլի-արծաթէ հանքերը նոյնից սկսում են մի մեծ եռանդով մշակել։ Այդ հանքերի մէջ նշանաւոր է, ասում են, մասնաւոր Պասիօ նահանգի Սերոյի հանքը։

«Միայն Շենշա կղզիների գուանի (աղաւ-թի) ներքին ծերութիւն» հետզհետեւ նուազում և էլ բաւականութիւն չէ ապի պահանջ-ներին։ Իսկ դրա հակառակ, այդ հիւլէր աւելի ու աւելի է աճում։ Չիլիում, և ա-սում են, որ այդ երկիրը միայն իր Մէքսի-կոն նահանգից 400,000 տակաւ սուղորական անգամները աւելի է ստանում։ Այս արդէն բաւական է հազարաւոր նաւեր բեռնաւորելու և մի տարի ժամանակով բաւականացնելու բո-լոր այն երկիրներին, որոնք հարկաւորութիւն են գցում դրա մէջ։»

ՄԵԿՍԻԿԱ ԶԵՆՈՒԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐՈՒԴ, 19 դեկտեմբերի։ «Рус-ский Инвалид» լրագիրը հաղորդում է։ Բարձրագոյն հրաման կայ որ Կովկասում գտնված այժմեան հեծեալգործի և կօղակնե-րի գունդերը արձակվեն և զրանց փոխանակ նորից կազմվեն կովկասեան հեծեալգործերի երեք գնդեր, որոնցից իւրաքանչիւրը բաղ-կացած լինի երկու բրիգադներից։ Այդ երեք գնդերը պէտք է կազմվեն կովկասեան այն նախկին պահաւոր հեծեալգործերի խմբերից, որոնք արդէն արձակված են։ Յետոյ պէտք է կազմվեն կովկասեան զինուորական վիճակում գտնված զօրքերից կովկասեան առանձին հե-ծեալգործերի մի բրիգադ պահաւոր համար։ Իսկ Կովկասի զինաւորներին 38,39 և 41 հետեւակ զօրքերի, և 1, 2 Կովկասի հեծե-ալգործերի գնդերից կազմվեն կովկասեան երկու բանակներ։

ՎԻԵՆՆԱ, 18/30 դեկտեմբերի։ Թիւրքիայի մինիստրների խորհուրդը վճռեց բոլորովին վերցնել կայմէն (թղթագրամ)։ Կրաֆ Կօր-տա Վիեննայով գնում է Կ. Պոլսի։

Ս. ՊԵՏԵՐՈՒԴ, 19 դեկտեմբերի։ Պետա-կան բանկի 50% տոմսիկ առաջին շրջանի արժէ 96 ռ., երկրորդ 94 ռ. 62 ֆ., երրորդ 94 ռ. 62 ֆ., չորրորդ 94 ռ. 87 ֆ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսիկ արժէ 235 ռ. 50 ֆ., երկրորդ 231 ռ. 50 ֆ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսիկ 92 ռ., երկրորդ 91 ռ. 50 ֆ., ոսկի 8 ռ. 53 ֆ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա ար-ժէ 23 պէնս, առաջ 100 ռուբլ Գերմա-նիայի վրա 196,50 մարկ, Փարիզի վրա 242 Ֆրանկ։ Ցրամագրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐՈՒԴ, երէկ հասաւ այստեղ Զինական գեղապետութիւնը։ Նրանք իրան են քաղական հիւրանոցում։ Նրէի գլխաւորա-կան զօրքի Բալկանները անցնելու յիշատակի համար Պրեօբրաժնիկ մայր եկեղեցում Բարձրագոյն ներկայութեամբ օրհնութեա-լիւն կատարվեցաւ։ Նրեկցեան ձմեռային պալատում հաջկերով կայր։

ՔԱՐԱՆՈՒԻՒ „ՌՈՒՍՍԱՏՆ“ ԸՆԴՈՒՄ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԵԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՅՄԱՆ—ԸՆԴՈՒՄ

Մարտի 4-ին ՏԵՆԻՍԻ ՊԱՎԼՈՒՄՈՒՄ ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂՁ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ, ՆԵԿԱՌՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒՂԸ 25 ԿՈՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՆԵՍՏԻՑ ՊՈՒՂԸ 28 ԿՈՊԵՂՈՎ:

Գործողայն փողոցի վրա ԱՐՄԵՆԻՈՒ ԳԱԼԵՐԻՈՒՄ, «Тифлисская Объявления» լրագրի խմբագրատան դիմացը ՆԻՐՕՊԵՎԵՆ ԵՊՐԵՆԵՔՆԵՐԻ ԽՆԻՐՈՒՄ ծախվում են էժԱՆ ԳԸՆՈՎ ապակեա (хрустальный) ճենապակեա (фарфоровый) և ֆայնանսեա ապրանքներ մի գնով: Գինու բաժանին դիմինը 90 Կ.—3 Բ., թէյի բաժանին դիմինը 1 Բ. 30 Կ.—7 Բ., օղիի բաժանինը 80 Կ.—4 Բ., չայիները 3 Կ.—1 Բ. հատը, թէյի թասերը 3 Բ.—12 դիմին, լամպաների ցրինդները 6 Կ.—10 Կ. հատը, սեղանի սերվիդ 12 հոգու համար 36 Բ.—140 Բ., թէյ սերվիդ նոյնպէս 12 հոգու համար 9 Բ.—15 Բ., ՄԻՒՍ ԱՊՐԱՆԵՐՆԵՐԸ ՆՈՅՆՊԵՍ ԷժԱՆ ԵՆ ՍԱՆՎՈՒՄ:

2—5

Զ ա թ. Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն Գ Ի ՎԱՃԱՎՈՐՈՒՄ ԵՆ
1. ՄՈՒՐԱՄԵՆԱՆԳ Ի—ԱՄՈՒՐԻՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵԿՈՎ. ԳԻՆՆ Է . . . 2 Բ.
2. Տ Է Ր Ա Ք Ր Վ Հ Ա Մ Ե Ա Ն — ՕՐԱՑՈՑ: 1879 թ. 12 Կ.
3. Շ Ե Ր Վ Վ Ա Ն Ե Ա Ն Գ. Գ. ԱՆԵԿՂՈՒՄ ԵՆ 50 Կ.
4. ՎԻՉԱԿԱՂՈՒՆ-ՈՐԵՆԷ (Ֆրանց Հոֆման) 40 Կ.

Մամուլի տակից դուրս եկաւ ՕՐԱՑՈՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ 1879 թ. համար.

Գինն Է 15 կոպ. հարկերով գնողներին 20% զեղումն կը լինի: Ստորագրողացիք ճանապարհածախք վճարումեն հարկեր օրինակի համար — 1 Բ. , յիսուսի համար — „ 60 Կ

ԴՅՈՒՄԻԱ իշտէ մէտո ԿՈՄՓԱՆԻՈՆԿԻ իւի ԳՍԵՐՆԱՆԿԻ. ԱԴրէժ. Տարօտօլիսկէսկա շուկա, ծոմ ՉիկօՎանի № 10

ՄԷՋ ՕՐՈՒՐԻ ցանկանում է ընկերակցութեամբ ԿՈՒՐՍԵԱՆ ԳԱՐՁՈՒՄԻ զաւտան ունենալ: Հաւցէն, Ստորագրողիչեանկայն փողոց, տուն 244-ական, № 10

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆԻ ՊԱՐԱՐԱՆՈՒՄ ԶԱՐԴԱՐԱՆՈՒՄ ԵՆ ԽՆԻՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՆԱՆ ՀԱՐԱՐԱՆՈՒՄ ՎԱՐՆԱՐԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԶԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՖՐԱՆԿԻ ԵՆ ՏՐԻԿՈՒ ՍԻՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, ՈՐՈՐԴԱՐԱՆ ԱՌԱՌՈՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱՆՏՆԵՐ ԵՆ ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱԿՈՒ—ԽԱՂԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՑՈՒՐՆԵՐ զննորական և քաղաքական հագուստների համար: Յոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՌԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ:

19—75

ՄԵՆԱԿԻ ՍՐԱԿԻՐԱՏԱՆԸ հարկւոր է մէջ ԼՐԱԿԻ ՏԱՐԱՇՈՂ. Պայմանները մասին կարելի է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ: ԵՆ ՐԵԴԱԿՑԻԱ «ՄՍԱԿԵ» ՈՒՅՆԵՆ ԲԱՅՈՒՄԻՆԵՐ:

Մի զաւղեացի ԳԱՂԻՆԵՆ ԼԵՂՈՒՄ զաւտուողներն մէջ քսան տարվայ փորձ ունեցող, կամեում է պարապել այդ լեզուի ԳԱՍԱՑՈՒՈՒԹԵԱՄԲ, Հարցնել պ. Արեւի մագաղանով, Այնքանդրեան այգու դէմ, Գոյովնակի պրօպագանդի վրա:

1—5

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ընդունվում է ստորագրողներն Կ. Պոլսի «Մասիս» լրագրին: Տարեկան գինն է Ռուսաստանում քսան րուբլ: Վճարը կանխիկ: Ստորագրվել ցանկացողներին խնդրում ենք օր առաջ յայտնել իրանց ցանկութիւնը և որոշ հաղորդել իրանց բնակութեան տեղն և հասցեն: ՆՈՅՆ ՏԵՂԸ

Վաճառվել սկսաւ ԵՂԵՂԻ ՎԱՐԴԱՆԱՆԳ պատմութիւնը Անձեաքեան օրինակից տպագրված ընդ վերջայեցողութեամբ Գ. Արեւի. Այլապէս: Գինը ընտիր թղթի վրա 1 Բ. հասարակ թղթի վրա 80 Կ. Կուսարով գնողներին 20% զեղումն կը լինի:

ԳԵՂԱՐՈՒՄՍԵՎԵՆ ՀԱՆՈՒՄ

որ գնվում էր Գործիչների պրօպագանդի վրա Սարաջով տանը, այժմ գնվում է նոյն ԳՕԼՕՎԻՍԿԻ պրօպագանդի վրա, ՇԻՐՈՎԻ տանը, Գերմանական կուրբի և Վէստլի ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով Այգեօրի համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը: Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած:

14—25

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՄ

Վաճառվում են, ի միջի այլոց, հետևեալ գրքերը:

	Բ.	Կ.		Բ.	Կ.
1. Տիգրանի Տոմարազիտութիւն կազմ. 78 թ.	2	25	Ճանապ. ծախ.	2	60
2. Տերենցի Թորոս Լեւոնի, պատմ. վեպ	1	—	—	1	20
3. Խուրաքաչեան բաղդիբը հայերէնից ռուսերէն երկու հատոր, կազմած (սովետական)	7	—	—	7	60
4. Ֆրանց Հոֆման՝ Ռընէ, վեպ	—	40	—	—	50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г.	3	—	—	3	40
6. Ахвердовъ Армения въ V вѣкѣ	1	—	—	1	20
7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи.	—	40	—	—	50
8. Ստացված են բաղմամբիւ հայերէն գրքեր, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, Կ. Պոլսի և Զմիւռնիոյ տպագրութիւնք:					
9. Շուտով կը սկսվի վաճառվել Եղեղի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձեաքեան օրինակի: Տպագրութեանը բարեհաճեց հսկել Նոյնի Սրբազնութիւն Դարբիէլ Արքեպիսկոպոս. Այլապէս: տպագրված է ամենայն զգուշութեամբ և ընտիր թղթի վրա: Հասցէն:					

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисе.

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВЪСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскай Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

НА ГОДЪ. НА ПОЛГОДА:

Въ Тифлисѣ, безъ доставки.	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой.	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи.	12 »	6 » 50 »
За границу по почтовому союзу.	15 »	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисѣ въ редакцію *Тифлискаго Вѣстника*.

ОБЪ ИЗДАНИИ

ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ

ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р., на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ близъ гостиницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: Въ Баку, въ редакцію *Бакинскихъ Извѣстій*.

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Въ 1879-мъ году будутъ издаваться по возможности въ улучшенномъ видѣ. Будетъ обращено особенное вниманіе на типографскую исправность и своевременную доставку. Форматъ по мѣрѣ накопленія матеріаловъ будетъ увеличиваться.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

	на годъ	на 1/2 года	на 3 мѣс.	на мѣс.
Въ Тифл. съ дост.	2	1р.—50к.	1р.	50 коп.
Иногороднымъ	4	2р. 50 к.	1р.—50к.	75 коп.

Подписка исключительно принимается въ конторѣ редакцій что въ Галереѣ Арцруни, на Дворцовой улицѣ.